

ՏԵՉԵԿԱՏՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հ.Բ.ՄԻՈՒԹԵԼՆ ԳԼՏԻՐԷԻ ՄԱՄՆԱԹՈՉՈՎԻ



ՄԻՈՒԹԵԼՆՍ ՍԻՐԵԼԻ ՆԱԽԱԳԱՀԸ՛ ՏԻԱՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՈՐ ՄԻՈՒԹԵԼՆՍ ԹԻՍՎԱՄԵՈՑ ՅՈՐԵԼԵԱՆԻՆ ԱՌԹԻԻ (1906—1956) ՊԻՏԻ ԱՅՑԵԼԷ ԲՈԼՈՐ
ԳԱՂՈՒԹՆԵՐԸ, ՆԵՐԿՈՑ ԳՏԵՈՒԵԼՈՒ ՀՈՄԱՐ ՅՈՐԵԼԻՆԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆՑ
«ՆՈՐ ՇՐՋԱՆ»

ՊՐԱԿ Ա.

1956

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
Հ. Բ. Ը. Միութեան Կեանքն ու Գործը	3
Ս. Էջմիածնայ Մայր Տահարին Վերանորոգումը	5
Հ. Բ. Ը. Միութիւնը Եգիպտոսի մէջ	7
Հայ Կիւր Բարեգործականի դրօշին սակ	9
Ազգապահպանման Պայքար	10
Նոր Կսակներ եւ Նուիրատուութիւններ	11
Նոր Վարժարաններ որոնք սկսան գործել	11
Մեր Դպրոցաւորութեան Ձեռնարկներէն	13
Նոր Մասնանիւղեր	13
Դարմանատուներ եւ Առողջապահական Ապաստակութիւններ	14
Զանազանք	16



Եթէ կ'ուզէք որ Բարեգործականը ընէ ա'յն ամէն բարի գործերը որ Ձեր արժին մօտ էն,
Եթէ կ'ուզէք որ Բարեգործականը շարունակէ կատարել իր նախախնամական վսեմ ա-
ռաքելութիւնը մեր բազմակարօտ Ազգին եւ անոր նորահաւ սերունդին պահպանումին հա-
մար ու ծառայէ Հայրենիքի վերականգնումին՝

Անվերապահօրէն ֆաջալերեցէ՛ք անար բոլոր ձեռնարկները, առաջին հերթին անդամա-
գրուելով անոր:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ



Մեր ազգանուէր Միութեան հիմնական նպատակը «Ազգապահպանում» է: Սփիւռքի Հայութիւնը ամեն ժամանակե աւելի ենթակայ է ապագայնացման եւ օտարացման: Կտուած հայրենի հողին ներշնչիչ եւ կենսագործող ազդեցութենէն, ենթարկուած օտար ազդեցութիւններու — նիւթական եւ մշակութային — Հայր գերմարդկային նիւթերու կը կարօտի իր ազգային դիմագիծը, Մայրենի բարբառը, կրօնական եւ ցեղային նուիրականութիւնները կարենալ պահպանելու համար: Այդ սրբութիւնները անեղծ պահելու, զանոնք յաջող սերունդներուն անխաթար կերպով փոխանցելու պարտականութիւնն է որ ստանձնած է մեր Միութիւնը, որ գիտցած է իր 50 տարիներու գործունէութիւնը պատշաճեցրնել օրուան բազմաստակ պէտքերուն եւ պահանջներուն:

Տարագրութեան ժամանակ իր բոլոր միջոցները տրամադրած է մեր քաղաքական եղբայրներուն, անուրի կարելիութեան սահմաններուն մէջ:

Հայահաւաքման միջոցին, անպատշաճները դրկած է մասնաւոր առա-

ջեցութիւններ, հա՛յ փնտելու, հա՛յ փրկելու համար:

Որբահաւաքման օրջանին, որբանցներու, ապաստանարաններու, մայրանցներու իր ընդարձակ կազմակերպութիւններով հազարաւոր բեկորներ փրկեց կորստեան անդունդէն:

Իր կրթական հիմնարկներով, ազգային հարիւրաւոր վարժարաններու ընձեռած օժանդակութիւններով, բուժակայաններով, ան աշխատեցաւ արիւնարբու թեւամիկն ձեռքէն փրկուած մեր խլեակներուն ծառայել, միտ հաւատարիմ իր հիմնական սկզբունքին, Ազգապահպանման նպատակակէտին:

Վերհրատարակելով «Տեղեկատու»-ն, Միութեան Գահիրէի Մասնաճիւղը, կը խորհի Գահիրէի իր հարիւրաւոր հաւատարման անդամներուն եւ մա՛նաւանդ ու մասնաւորապէս Եգիպտոսահայութեան ու ռադիոյութեանը յանձնել Միութեան *Կեանքն ու Գործը*, որ յարանուն կերպով կը ծաւալի եւ կ'ընդարձակուի Սփիւռքի մէջ, համաձայն ներկայացած տեղական բազմապիսի պահանջներուն:

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՐԿԵՐ 1954—1955 ՏԱՐԵՆՐՁԱՆԻ ՀԱՄԱՐ

1.— Լիբանանի Շրջան
76000 Տոլար

Մատակարարելու համար

- 1) Պէյրուսի Յովակիմեան-Մանուկեան Մանչ. Երկր. Վարժ. ք
- 2) « Դարունի Յակօբեան Աղջկ. Երկր. Վարժ. ք
- 3) Օժանդակելու կարօտ դպրոցներու
- 4) Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան
- 5) Դարմանասան

2. — Սուրիոյ Շրջան
37000 Տոլար

Մատակարարելու համար

- 1) Հալեպի Լազար Նանարեան վարժ.ը
- 2) Օժանդակելու Հայ Երիտ. Ընկ.եան
- 3) » » Դարմանասան եւ խը-
նամասարակ. գործին
- 4) » Նպաստընկալ վարժարան-
ներու

3. — Յունաստանի Շրջան
14900 Տոլար

Մատակարարելու համար

- 1) Աբեհի երկու Ազգային Միացեալ
վարժարանները
- 2) » երկու հայ Աւես. »
- 3) Գործուի նորաբաց »
- 4) Օժանդակելու Հայ Երիտ. Միութեան
- 5) Յունաստանի Երջուն Հոգ. Հովիի
ծախքերուն

4. — Կիպրոսի Շրջան
62000 Տոլար

Մատակարարելու համար

Մելգոնեան Կրթական Հաստատու-
քիւնը, ուր կ'ուսանին 195 երկսեռ
աշակերտներ, որոնց կը սրամադրուին
նաեւ սնունդ, զգեստ, գրեմական պի-
տոյք, բժշկական եւ դարմանական խը-
նամք եւն., եւն.:

5. — Եւրոպայի Շրջան
19675 Տոլար

Մատակարարելու համար

- 1) Նուպարեան Մասենազարանը
- 2) Մարկոսեան Սաներու կրթաբոսակ-
ները
- 3) Ֆրանսայի հայերէնի դասընթացները
- 4) Տեղական զանական օգնութիւններ

6. — Թուրքիա
10000 Տոլար

Պոլսոյ նոր Դպրեվանքին, ուր 33
սաներ կ'ուսանին

Կրթական այլ նպաստներ
18000 Տոլար

Սուսարելու համար

- 1) Երուսաղէմի, Անթիլիասի և Պոլսոյ
Դպրեվանքներուն
- 2) Թեհրանի Նուպար վարժարանին
- 3) Փարիզի Դպրոցասէր Տիկնանց վար-
ժարանին

Հ Ա Յ Ր Ծ Ն Ա Կ Ա Ն

Ա. ԷԶՄԻԱԾՆԱՅ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄԸ

✽

Ամենայն Հայոց երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Զ. Սրբազան Կաթողիկոսի անուան հետ սերտօրէն կապուած պիտի մնայ անշուշտ Ս. Էջմիածնի Մաքր Տաճարի վերջին լայնածաւալ և համայնապարփակ նորոգութիւնը, որուն աշխատանքները սկսած էին երբ դեռևս ողջ էր ալեզարդ Հայրապետը:

Կ'ընդգծենք լայնածաւալ և համայնապարփակ բառերը, որովհետև կատարուած աշխատանքները կ'ընդգրկեն ո'չ միայն Մայր Տաճարի և Վեհարանի՝ ժամանակի և բնութեան ազդեցութեան տակ հնացած, մաշուած և խարխլած մասերուն վերանորոգումը, այլ և արմատական վերամշակումը ներքին նկարազարդումին, զորն նշանաւոր նաղաշ Յովնաթանի (ծն. 1661 թ.) և իր թուան՝ Յովնաթան Յովնաթանեանի (18րդ. դար), ինչպէս նաև արտաքին հո-

✽

Մենդական յսկացումներ. — Փոսի կաթ Հայ երախաներուն համար

Հոլանտային Լիբանան դրկուած 6000 ֆիլօ կաթ	}	. . .	Սրժէք
» Երուսաղեմ » 2000 » »			5000 Տոլար
» Սուրիա » 8000 » »			5500 »
Ամերիկային Յունաստան » 4000 » . »			4226 »

✽

Զանազան նպաստներ եւ օգնութիւններ. — 8447 Տոլար

- | | |
|--|------------|
| 1) 676 Քերի ուսեսեղեկի ծրարներ | 5400 Տոլար |
| դրկուած զանազան երկիրներ | |
| 2) 29 հակ գործածուած հագուսեղեկի առաքման ծախս | 424 » |
| 3) Զանազան դեղեր — գլխաւորաբար Յունաստան | 648 » |
| 4) Փարիզ, Մարի Նուպար Հայ Ուսանողական Տան նախահաճի համար սուրն եւ շաքար | 455 » |
| 5) Դրամական աշակցութիւն կարօտ մատուցականներու, որոնց շաքարի Տի. Լեփսիոսի | 1520 » |

Բայցառիկ հանգանակութիւններէ. —

- | | |
|--|-------|
| 1) Պէյրութի Սահակեան Վարժիկ, Միութեան Թուլարե Գաւուրիի (Գալիթ.) Կրտսերաց Լիկայի կողմէ | 400 » |
| 2) Լիբանանի Հայ Կոյրերու Տան, Միութեան Սան Ֆրանսիսկոյի Մասնահիւղիկ կողմէ | 300 » |
| 3) Պէյրութի Թոշնոց Բոյն Որբանոցին, Միութեան Լօս Աննկլրսի եւ Ֆրեզնոյի Տիկ. Մասնահիւղերուն կողմէ | 300 » |

ղակերտ պարսպին հիմնովին քանդումը և հայրենական տուֆ քարերով անոր փոխանակումը:

Հայ եկեղեցական պատմութենէն զիտենք թէ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի սկզբնական փայտաշէն կառուցումը տեղի ունեցած է Գրիստոսի 303 թուականին, Տրդատ Մեծ Թագաւորի և Սուրբ Գրիգոր Լուսաւորչի ձեռամբ, իսկ 485 թուականին, Հայաստանի Մարզպան Վահան Մամիկոնեանը, փայտաշէն եկեղեցւոյ տեղ, նոր ոճով և ժամանակի պահանջած յատկազօծով շինած է քարակերտ եկեղեցին, որ յետագային զանազան նորոգութեանց և նոյն իսկ յատկազօծային փոփոխութեանց ենթարկուած է:

Մայր Տաճարի առաջին կարեւոր նորոգութիւնը տեղի ունեցած է նախապէս Մամիկոնէից Եպիսկոպոս և Սուրբ Հռիփսիմէ Վանքի փակակալ (լուսարարապետ) Կոմիտաս Կաթողիկոսի օրով (7րդ դարուն): Փայտաշէն գմբէթի տեղ քարաշէն գմբէթի կառուցումը անոր կը վերագրուի: Սակայն յատկազօծային աչքառու փոփոխութիւնը կատարուած է Ներսէս Գ. Շինող Կաթողիկոսի ձեռամբ (7րդ դար), Կոմիտաս Կաթողիկոսէն 20 տարի յետոյ:

Ներսէս Շինող Կաթողիկոսէն մինչեւ Գ. Տաթեւացի Կաթողիկոսը (17րդ դար) անցնող տասը դարերու ընթացքին, Մայր Տաճարի վրայ ո՛չ մէկ նորոգութեան յիշատակութիւնը չենք տեսներ: Միայն Սիւնեանց Անապատի փառքն ու պարծանքը եղող Մովսէս Վարդապետի (յետագային Կաթողիկոս = Տաթեւացի) ձեռամբ հիմնական նորոգութիւններ կատարուեցան Մայր Տաճարի վրայ և անոր շուրջը կառուցուեցան պարիսպներ և նոր շէնքեր: Մասնակի նորոգութիւններ ևս կատարուած են Փիլիպոս Աղբակեցի (1633—1655), Յակոբ Գ. Ջուղայեցի (1655—1680), Եղիազար Այնթապցի (1682—1690) և վերջապէս Եփրեմ Կաթողիկոսներու (1810 թ.) ձեռամբ:

Ս. Էջմիածնայ Մայր Տաճարի և շրջափակի մէջ կատարուած վերանորոգման և վերակառուցման հսկայական աշխատանքները, որոնց նմանը հայոց եկեղեցական պատմութիւնը զեռ արձանագրած չէ, կը պարտինք Հայաստանի բարեխնամ կառավարութեան, որ աւելի քան 7 միլիոն ռուպլի տրամադրելով ապահովեց 16 դարերու հնութիւն ունեցող հայ ճարտարապետութեան և հայ հաւատքի կոթողին գոյատեւումը:

Ինչ կը վերաբերի Մայր Տաճարի պատմական նկարագրողութիւնի աշխատանքներուն, անոնք կատարուած են Երեւանի Գեղարուեստական Ինստիտուէն շրջանաւարտ նկարիչներու ձեռամբ և հսկողութեամբ Հայաստանի Պետական Թանգարանի և Պատկերասրահի Հին Հայկական Արուեստի բաժնի պետ, Հայ Մանրանկարչութեան հանրաժանօթ մասնագէտ՝ Տիկին Դուռնովայի (Ռուս), որուն «Հայ Մանրանկարչութեան Ալպոմ»ը լոյս տեսաւ Լենինկրատի մէջ:

Անցեալ Նոյեմբեր 25ին (1954) սկսած աշխատանքները վերջ գտան 1955ի Յունիսին:

«Ս. Էջմիածին» Հանդեսէն



Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՄԷՋ

1) *Մարզական Վարկ*.— Հ. Բ. Ը. Միութիւնը իր ազգապահպանման գանազան ձեռնարկներուն եւկան մասը կը նկատէ իր հովանիին սակ գրանուող Հայ Երթ. Կազմակերպութեանց զօրացումն ու ծաւալումը: Այս բնութեամբով Կեդր. Վարչ. Ժողովը, Եգիպտոսի Կեդր. Յանձնաժողովին ընդարձակ մեկ հաղորդագրութիւնը ուսումնասիրելէ վերջ, համաձայն գտնուեցաւ որ Հ. Բ. Ը. Միութեան կողմէն գործող եւ մօտ 300 անդամ հաշուող *Աղեքսանգրիոյ Հ. Մ. Ը. Մ.ին համար մարզարանի* ընդարձակ հող մը գնուի, եւ այդ նպատակին յատկացուց 5000 (հինգ հազար) Եգիպտական ոսկի (14250 տլար):

2) Միութեան «ՆՈՒՊԱՐ» Մարզարանը (Շուպրա), լուծարի ենթակուած ըլլալով, իր գոյներն ու կարասիները արդէն փոխադրուած են ապահով վայրեր: Գալով նոր Մարզարանի մը կազմակերպութեան, Հելիոպոլսոյ մէջ եւս ծրագրուած է գնել բաւարար տարածութեամբ հող մը, որուն վերջնական կարգադրութիւնը կը յուսանք յայտարարել ի մօտոյ: Ծրագրուած է որ նոր Մարզարանը ունենայ նաեւ իր կողմէն վայելուչ ակումբ մը, իր սրահովն ու մասենադարանովը, որպէսզի Միութիւնս մշակութային գետնի վրայ եւս սկսի ներդոյժ գործունէութեան:

Հ. Մ. Ը. Մ.-Նուպար Հելիոպոլսոյ Մարզարանը, որ Միութեանս հովանիին սակ կը գտնուի, ունի մարզական եւ սփառչական խումբեր: Իր պատկերի առաջին խումբը՝ Եգիպտոսի լաւագոյն խումբերէն մին կը նկատուի: Որոշուած է նոր եւ ուժեղ կազմակերպութեամբ մը օժտել Միութեանս անուան հետ կապուած մեր սոյն մարզական միութիւնները:

3) *Հեֆիմեան Մարզարան* — (Սապա Փաշա) — Աղեքսանդրիոյ Սապա Փաշա արուարձանին մէջ ունինք բարեբար Կ. Հեփմեանի անուան մարզարան մը, որ բաղաձեռն հեռաւորութեանը պատճառաւ օգտագործելի ըլլալէ դադարած է. առ այժմ սոյն մարզարանը կ'օգտագործուի որպէս ամառնային օդազնացութեան կայան: Միութեանս արիւնքը 1955ի ամրան, ինչպէս եւ այլ երիտասարդական ու պատանեկան խումբեր իրենց արձակուրդը անցուցին վերոյիշեալ մարզարանին մէջ, որ օժտուած է ջուրով, լոյսով եւ անհրաժեշտ բոլոր յարմարութիւններով:

ՅՈՎԱԿԻՄԵԱՆ ՍԱՆՆԵՐ.—

Բարեբար Սարգիս Յովակիմեանի նուիրատուութեան (տեսնել մեր 1956ի օրացոյցը) պայմաններուն համաձայն, անոր եկամուտները կը գործածուին ուժիմ եւ կարօտ հայ տղոց երկրորդական կրթութեան համար, Եգիպտոսի եւ Մերձաւոր Արեւելիի այլ երկիրներուն մէջ: Միութեանս Եգիպտոսի Կեդր. Յանձնաժողովին կողմէ կը կատարուի սաներու ընտրութիւնը եւ բուսակներու յատկացումը:

1954 տարեգրանին, *Յովակիմեան Սաներու* բիւր 91 էր, որոնք յանա-

խած են 28 զանազան երկրորդական վարժարաններ, հետեւեալ մանրամասնութիւններով.—

Գահիրէ	38	երկսեռ սաներ.— ամերիկեան, Ֆրանսական, անգլիական եւ իսպալական 12 վարժարաններու մէջ:
Ազեքսանդրիա	30	սաներ.— Ֆրանս. եւ իսպալական 7 վարժարաններու մէջ:
Պէյրուս	13	»
Հալէպ	5	»
Երուսաղէմ	3	»
Թրիբուի	1	»
Դամասկոս	1	»

համազումար 91 սան-սանուհիներ, որոնց համար տարեկան աւելի քան 2000 Եգիպտ. Ոսկի կը ծախսուի (կրթաբօսակ, գիրքեր եւ գրեմական ծախքեր):

1953—1954 տարեշրջանին, իրենց երկրորդական ուսման տրջանը աւարտեցին 13 սան-սանուհիներ:

ՄԱՐԿՈՍԵԱՆ ՍԱՆԵՐ.—

Բարեբար Ռաֆայէլ Մարկոսեանի հիմնադրամին եկամուտները իբրեւ կրթաբօսակ կը տրուին Երուսաղիմի մէջ արհեստագիտական ուսմանց հետեւող երիտասարդներու, որոնց ընտրութիւնն ու վերահսկողութիւնը կը կատարէ Միութեան Երուսաղիմի Կեդր. Յանձնաժողովը:

1953 տարեշրջանի «Մարկոսեան» Սաներու թիւն էր 40, որոնց տասը իրենց ընթացքը աւարտեցին, եւ որոնց երկուքը եգիպտահայեր են:

1) Գրիգոր Թուլլուեան, Գահիրէ, մեքենագիտ-էլեկտրագիտ

2) Ժան Վարդանեան, Ազեքսանդրիա » »

1953ին, «Մարկոսեան» Սաներուն համար ծախսուած է 5700 Տոլար:

1954ին, յիշեալ սաներուն թիւը 42 էր, որոնց 11ը աւարտեցին իրենց ընթացքը, (Ռասիօ-Ելեկտրականութիւն, Մեքենագիտութիւն, Հարտարապետութիւն, կար ու ձեւ):

Այս տարեշրջանին, «Մարկոսեան» Սաներու կրթաբօսակներուն ընդհանուր գումարը եղած է 5818 Տոլար:

ՆՈՒՊԱՐԵԱՆ ՎԱՐՃԱՐԱՆ, ՀԵՂԻՈՊՈՒԽՍ.—

Միութիւնն կ'օժանդակէ «Նուպարեան» Ազգ. Վարժարանին, մեծանուն բարեբար Պօղոս Նուպարի կսակէն զանազան արժեքուղիներու կտրոններուն փոխարժեքը տրամադրելով, որմէ անցնող 1954ի հաշուոյն գոյացած էր շուրջ 1200 Եգիպտ. Ոսկի:

ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐՃԱՐԱՆԱՅ.—

Միութիւնն՝ զնահասելով Կիրակնօրեայ Վարժարանաց օգտակար ծառայութիւնը, 1955—1956 տարեշրջանին համար տրամադրեց 25 Եգիպտ. Ոսկի, առ ի ֆաջալերութիւն:

ՀԱՅ ԿԻՆԸ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆԻ ԴՐՈՇԻՆ ՏԱԿ



ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ՇԱՐԺՈՒՄ

ԻՐԱՆ. — Հ. Բ. Բ. Միութեան Թեմա-
րանի Մասնաճիւղի կողմից հիմնուե-
ցաւ նաեւ Օրիորդաց Օժանդակ Մար-
մին մը, որ ունի վեց մասնախում-
բեր, ինչպէս 1) Մշակութային, 2) Ըն-
կերային, 3) Թատերական, 4) Ձեռար-
ուեստի, 5) Մարզական, 6) Կարգա-
պահական, որոնց իւրաքանչիւրը ունի
իր ղեկավար մարմինը:

Տիկնանց Մասնախումբը 1955
Մարտ 18ին տօնեց իր կազմութեան
հասնամեակը՝ կազմակերպելով տեղ
քեյտանկան մը որուն շուրջ հաւա-
ուած էին 170 անդամուհիներ եւ տեղ-
ւոյն Մասնաժողովի անդամները:

Նախագահուհի Տիկին Շիբմանեան
վարած է հաւաքոյթը, պանծացնելով
գործօն եւ զոհաբերող անդամուհինե-
րուն հայրենասիրական խանդն ու ե-
ռանդը: Գեղարուեստական յայտագրի
գործադրութենէն յետոյ, բոլոր ներկա-
ները ճիւրաւսիրուած են քեյով, խմոր-
եղէնով եւ բաղցեղէնով, նուիր-
ուած Տիկնանց Մասնախումբի վար-
չութեան կողմէ:

ՅՐԱՆՍԱ, ՓԱՐՏԻԶ. — Կազմուած
է Հայ Օրիորդներու Միութիւնը, որ
պիտի գործէ Բարեգործականի հոգա-
սարութեան ենթակայ Հայկազեան վար-
ժարանին սաստեղծու համար: Այս նո-
րակազմ եւ խոստմնայից Միութիւնը
տուաւ արդէն իր շատ գնահատուած հա-
ւաքոյթը, Փարիզի Ազգային Տան քա-
տերասահին մէջ:

ՀՍՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ. — Ուրու-
կուայի մայրաքաղաք Մոնթիվիսիէոյի
մէջ կազմուած է Տիկնանց Օժանդակ

Միութիւն մը, Միութեան Տեղական
Մասնաժողովին հովանաւորութեամբ:
Տիկնանց Օժանդակ այս նորակազմ
մարմինը արդէն լծուած է մշակութա-
յին աշխատանքի:

ՊԷՅՐՈՒԹ. — Միութեան Պէյրութի
կար ու ձեւի դասընթացքը, տեղւոյն
մեր Տիկնանց Յանձնախումբին կողմէ
հաստատուած, կը գործէ 6—7 սարինե-
րէ ի վեր եւ ամէն սարի կու տայ որա-
կաւոր շրջանաւարտուհիներ: 1955ի ըն-
թացքին շրջանաւարտ եղան 17 տիկն-
ներ եւ օրիորդներ, իսկ կար ու ձեւի
դասընթացքը լրացնողներու քիւր բար-
ձրացաւ 179ի:

ՀԱԼԷՊԻ մէջ եւս կազմակերպուե-
ցաւ (1955) Միութեան Տեղական
Մասնաժողովին նախաձեռնութեամբ
կար ու ձեւի դասընթացք մը, կարող
վարժուհիի իր հսկողութեան տակ.
դասաւանդութիւնները կատարուեցան
եօրր ամիս, շաբաթը 4 անգամ, 3-ա-
կան ժամ տեւողութեամբ:

3 Յունիս 1955ին տեղի ունեցաւ
վկայականներու բախման հանդէսը
եւ շրջանաւարտ եղան 37 տիկններ եւ
օրիորդներ:

ԱԹԷՆՔԻ մէջ, Տորդութի կոչուած
աղբասիկ քաղամասին մէջ եւս կը
գործէ մեր Տիկնանց ջանքերովը կազ-
մակերպուած կար ու ձեւի դասըն-
թացքը, որմէ կ'օգտուին նաեւ հելլէ-
նուհիներ. դասընթացքը ունեցած է
ցարդ 150 աշակերտուհիներ, որոնց
110ը աւարտած եւ ստացած են իրենց
վկայականները:

ՓՐԱՒԻՏԷՆՍ (ԱՄԵՐԻԿԱ). — Հ. Բ.
Բ. Միութեան Փրաւիտենսի Տիկնանց
Օժանդակի առաջին ժողովը տեղի ու-
նեցաւ 1955ի Մարտին: Անդամուհիներ-

ԱԶԳԱՊԱՀՊԱՆՄԱՆ ՊԱՅՔԱՐ

Բարեգործականի զլիսաւորագոյն մտասեւեռումն է ազգապահպանութիւնը: Հիմա, որ զաղթականները տեղաւորուած կամ հայրենիք ներգաղթած են, և որքերը աճած, մեծցած, տուն տեղ եղած ու ինքնապահ դարձած մեծ չափով, Միութեանս զլիսաւորագոյն մտահոգութիւնը կը դառնայ մեր զաղութներու հայկական դիմագծին պահպանումը, հայը հայ պահելու նուիրական պարտականութիւնը: Այս նպատակաւ ալ մեր Ամերիկայի 41րդ Պատգամաւորական Ժողովը, որ գումարուեցաւ Ուտորի մէջ՝ անցեալ Մայիսի 27, 28 և 29ին, 125 պատգամաւորներու մասնակցութեամբ, քուէարկեց հետեւեալ երկու կարեւոր որոշումները.

1. — Հ. Բ. Ը. Միութեան յիւնամեակին առթիւ ԿԼՍ ՄԻԼԻՈՆ ՏՈՂԱՐԻ հանգանակութիւն, Ամերիկայի զաղութին հայապահպանութեան գործածուելու համար:

2. — Անդամագրութեան նոր արժաւ, այժմու 7000ի թիւը բարձրացնելու 10.000ի, յորելինական տարուան ընթացքին:

45000 ՏՈՂԱՐ

Նիակարա Ֆոյսէն ողբացեալ Պետրոս Ղազարեան 45,000 տոլարի կտակ մը ըրած է Միութեանս, որ Նոր Բրի գիւղի շինարարութեան համար պիտի օգտագործուի:

Ողբացեալը Միութեանս վեթերան անդամներէն էր, ծանօթ իր հայրենասիրութեամբ և եկեղեցասիրութեամբ. ան տեղւոյն Ս. Սարգիս եկեղեցւոյ շինութեան մասնակցած էր 8000 տոլարով:

ըր միասնաբար երգեցին Տեռուական աղօթքը: Ժողովի Ասեմապետներին՝ Տիկ. Ալաւնի Աստեան, նկարագրեց Բարեգործականի կասարած հսկայ դերը հայ ազգային կեանքին մէջ եւ կոչ ուղղեց ներկաներուն օգնելու նոր վարչութեան: Տեղի ունեցաւ բանախօսութիւն եւ գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր:

ՅՐԷՉՆՕ (Գալիֆօրնիա).— Միութեանս Տիկնանց Օժանդակի «Մայրերու Օր»ուան հաւերոյթը տեղի ունեցաւ Մայիսին, Ս. Պողոս Մայր Եկեղեցւոյ

ներքնասահմ, որուն մասնակցեցան հոծ քիւով սիկիներ, եւ բոլոր մայրերուն բախուեցան ծաղկեփունջեր:

Օրուան Մայրիկի պատիւին արժանացաւ Տիկ. Ա. Մարտիրոսեան որ երկար տարիներ ծառայած է մեր կազմակերպութեան եւ նոյն անձնուիրութեամբ ալ կը ծառայէ եկեղեցիին:

Տեղի ունեցան ուղերձներ, արսասանութիւններ եւ նուիրասուութիւններ՝ Կարի Ֆոնսին ի նպաստ:

(Շարունակելի)

Ն Ո Ր Կ Տ Ա Կ Ն Ե Ր

Ե Ի

Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

1.— Հանգուցեալ բարերար Արսէն է. Դերձակեան, Ուաշինկիթըն նահանգի Բէէշմիր քաղաքէն, կտակով 40.000 տոլար թողած էր Միութեանս, տարի մը առաջ: Այս գումարը այժմ ստացուած ըլլալով, պիտի գործածուի Բարերարին կողմէ որոշուած նպատակին՝ ամերիկահայ ուշիմ և չքաւոր տղոց կրթութեան գործին:

2.— Տիար Հայկ Մ. Պոյաճեան (Գոլումպոս, Օհայոյէն), 5000 տոլարի գումար մը ղրկած է Միութեանս, իբրեւ առաջին վճարում իր ծրագրած կըրթական գեղեցիկ մէկ նպատակին համար: Ազնիւ նուիրատուին բաղձանքն է ճարտարագիտական վարժարանի մը հաստատումը Արևելքի մեր գաղութներէն մէկուն մէջ:

3.— Բարեսէր ազգային մը, որ առ այժմ կ'ուզէ անձանօթ մնալ, 10.000 տոլարի գումար մը յանձնած է Միութեանս: Ան մօտ ատենէն պիտի ճշգէ իր նուիրատուութեան նպատակը:

4.— Աշխատաւոր հայ մը Միութեանս նիւ Եորքի գրասենեակը ներկայանալով, Կաթի Ֆոնսին համար տրամադրած է 4240 տոլար: Արդէն իսկ ղըպրոցաշինութեան հանգանակութեան մասնակցած էր 5000 տոլարով: Այս տիպար հայը՝ Սեդրակ Մեսրոպեան, համեստ գործաւոր մըն է, երեսոյթով պարզուկ բայց սրտով մեծահարուստ:

ՆՈՐ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ ՈՐՈՆՔ ՍԿՍԱՆ ԳՈՐԾԵԼ



1) 1954 Հոկտեմբեր 25ին Հալէպի մեջ բացուեցաւ Միութեանս Լազար Նաճարեան Նախակրթարանը, իր Մանկապարտէզի բաժինով: Վարժարանը ունի սեփական բնդարձակ եւ գեղեցիկ շէնք:

Առակերտութիւնը 100ի չափ է. ուսուցչական խումբը 11 հոգի է, որոնց երկուքը՝ այցելու:

Մանկապարտէզը ունի 4 եւ Նախակրթարանը՝ 5 կարգեր:

Միութիւնս հաստատած է նաեւ ինքնաշարժի սպասարկութիւն մը, փոքրերու եւ հեռաւոր քաղերու մէջ բնակող աղքատիկ առակերտներու երթելու կից ի դիւրութիւն:

2) 1954 Հոկտեմբեր 27ին, Պէյրութի Տօրա-Ամանոս քաղին մէջ հանդիսաւոր բացումը կատարուած է Ահրամճեան նորակառոյց Վարժարանին: Բացման օրը առակերտութեան քիւր 80 եր:

Այս վարժարանը կառուցուեցաւ Յովհաննէս եւ Գառնիկ Ահրամճեան եղբայրներու 10500 տոլարի բարերարութեամբ: Շէնքը Միութեանս սեփականութիւնն է, իսկ վարժարանը կը մասակարարուի Ազգ. Իշխանութեան կողմէ:

3) 1955 Փետրուար 17ին, Վարդանանց Օրք, սեղի ունեցաւ Հ. Բ. Ը. Միւրքեան կողմէ կառուցուած Նոր Ատանայի՝ Ազգային Կիլիկեան Վարժարանի պատճենական բացումը եւ Ազգային Իւխանութեանց յանձնումի հանդիսութիւնը: Այս վարժարանը հիմնուած է 1932ին, պարսի մը մէջ: Այսօր, շնորհիւ Օր. Լիլա Գարակեօզեանի 60000 Լիբանանեան Ոսկիի յակացումին, օդակէ եւ արդիական շէնք մը կը բարձրանայ, որուն երդիքին ճակը՝ ուսանին 200ի չափ առակերներ, ժամանակ մը ուսուցիչներու առաջնորդութեամբ: Շրջանի Քաղ. Խորհուրդը եւս իր կարգին 10000 Լիբ. Ոսկի սրամադրելով, կահաւորած է այս վարժարանը:

4) ԳՈՐՑՈՒԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶԸ.— Միւրքեանս Արեւի Մասնաճիւղի նախաձեռնութեամբ, այս տարի բացուեցաւ մանկապարտէզ մը, սեղւոյն 40ի մօտ փոքրիկներուն համար:

Կեդր. Վարչութիւնը այս նպատակին յակացուց 500 տուար, իսկ ծախսերուն պակասը Մասնաճիւղը պիտի գոցէ իր ջանքերով:

5) ՎԱՀՐԱՄ ԻՒԶՊԱՇԵԱՆ ՄԱՆԿԱՊԱՐՏԷԶ, Ի Զահլէ.— Աւարտած է նաեւ այս մանկապարտէզին շինութիւնը, որուն համար 6000 տուար ծախսուած է:

Քէչրանի ՆՈՒՊԱՐ Վարժարանը չորս տարի առաջ հիմնուեցաւ: Այս տարի առակերներու թիւը 450ի բարձրացած է: Վարժարանը ունի 5 դասարան, զուգընթացներով: Ուսուցչական մարմինը կը բաղկանայ 18 հոգիէ: Տնօրէնը՝ Աոտ Առաքելեան, միանգամայն դասախօս է Իրանի Համալսարանին: Ունի անգլիերէնի պարտադիր դասընթաց: Հայերէնի երեք գլխաւոր ուսուցիչները Ատրպատականի նախկին Քեմական Գաղտնի շրջանաւարտներն են: Առակերներու մէջ կան մեծ թիւով ձեռնարկներ, որոնք ներգաղթին ետ մնացած գիւղացիներու զաւակներ են: Քեհրանի մեր ժրջան Մասնաճիւղը հոգածու է նոյնիսկ անոնց հագուստին եւ ցերեկուան նաւին համար: Վարժարանի տարեկան պիւստենն շուրջ 15000 տուար է, որուն 5000ը կը տրամադրէ Կեդր. Վարչութիւնը եւ մնացեալը կը գոյացնէ Մասնաճիւղը:

*. Յովակիմեան-Մանուկեան Մանչերու Երկրորդական Վարժարանը (Պէյրուք), երկրորդ անգամ ըլլալով այս տարի եւս առաջին հանդիսացած է Օքսֆորտ-Քէմպրիճի ֆէնութեանց մէջ: Վարժարանը ունի 211 առակեր: Տեղի անբաւարարութեան պատճառաւ կարելի եղած չէ ընդունիլ բազմաթիւ քեկնածուներ:



ՄԵՐ ԴՊՐՈՑԱՇԻՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԷՆ



1.— Սեդրակ Մեսրոպեան Վարժարան՝ Ռազգա.—

Այս վարժարանը, որուն համար Սեդրակ Մեսրոպեանի վեհանձն նուիրատուութիւնը յատկացուեցաւ, 5000 տոլար, աւարտեցաւ 1955ի ընթացքին:

2.— Նուրհան Քրեանեան Վարժարան՝ Հալեպ (Շէյխ Մաքսուտ.—)

Այս վարժարանին հողը գնուած ըլլալով, 1955ին սկսաւ շէնքին կառուցումը: Այս դպրոցին համար պիտի ծախսուի 8000 տոլար:

«Շէյխ Մաքսուտ» քրտախօս հայերու շրջանն է, ուր հայ վարժարանը կոչուած է փրկելու մեր սոկեղնիկ լեզուին կարօտովը ապրող հայ մանկտիքը:

3.— Կիւլլապի Կիւլպեցեան Վարժարան՝ Գամասկոս.—

Վարժարանի շէնքը գնուեցաւ 27.000 տոլարի՝ շնորհիւ Կիւլլապի Կիւլպեցեան Հիմնարկութեան վեհանձն նուիրատուութեան: Միութեանս այս սեփական դպրոցը արդէն 1955ին բացաւ իր դռները:

4.— Ահրամեան Վարժարան՝ Պէյրութ.—

Ահրամեան եղբայրներու բարերարութեամբ կառուցուած Ահրամեան վարժարանը, որ Միութեանս սեփականութիւնն է, պիտի մատակարարուի Պէյրութի Ազգ. Առաջնորդարանին կողմէ: Շինութեան համար ծախսուած է 10.500 տոլար: Վարժարանը բացուեցաւ անցեալ Հոկտեմբերին:

5.— Անթիլիասի Նախակրթարանը խեղճ վիճակի մէջ կը գտնուէր, խարխլած դասարաններով և կիսափուլ ճեմիշներով: Օր. Գարակէօղեանի և Տիար Կիրակոսեանի տեղեկատուութեանց վրայ հիմնուելով, Միութեանս Կեդր. Վարչ. Ժողովը Արլիցկոյի Մասնաճիւղին 5000 տոլարի նուիրատուութիւնը յատկացուց սոյն Նախակրթարանին հիմնական նորոգութեան:

6.— Լազար Նանարեան Վարժարան՝ Հալեպ.—

Հոյակապ վարժարան մը, լուսաւոր, զուարթ դասարաններով, ընդարձակ սրահով և ծաղկազարդ բակով: Շէնքը գնուեցաւ 33.000 տոլարի և որուն վրայ ծախսուեցաւ շուրջ 3700 տոլար: Վարժարանը բացուեցաւ 1954 Հոկտեմբերին, 80 աշակերտով, իսկ 1955ին այդ թիւը բարձրացաւ աւելի քան 200ի: Այս վարժարանը, որ ներկայիս նախակրթարան մըն է, հետզհետէ պիտի ունենայ նաև երկրորդական կրթութեան յատուկ բոլոր դասարանները:

ՆՈՐ ՄԱՍ ՆԱՃԻԻՂԵՐ

ՅՈՒՆԱՍՏԱՆ

Միութեանս Սելանիկի Մասնաճիւղին ջանքերով նոր մասնաճիւղ մը կազմուած է Սեբեքի մէջ:

ԻՍՐԱՅԷԼ

Միութեանս Հայֆայի նորակազմ Մասնաճիւղը յաջողած է Իսրայէլի կառավարութեան կողմէ վաւերացնել տալ իր տեղական կանոնադիրը, ըստ որում ան իր օրինական կապերը կը պահէ Կեդրոնին հետ և կ'արտօնուի Միութեան հիմնական նպատակներուն համապատասխան գործունէութիւն մը ունենալ:

Դ Ա Ր Մ Ա Ն Ա Տ Ո Ւ Ն Ն Ե Ր

Ե Ի

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ



Պէյրուքի դարմանատունը կը ղեկավարուի Խնամակալ Մարմնի մը կողմէ: Դարմանատունը ունի իր բժշկը, ատամնաբոյժը և օգնական հիւանդապահուհի մը: Դարմանատան տընօրէնուհին է Օր. Լիւսի Յակոբեան:

1954ի ընթացքին, դարմանատան մէջ քննուած են 4000ի չափ հիւանդներ և նոյնքան թիւով անձեր ալ խընամուած են ատամնաբոյժին կողմէ:

Դարմանատան բժիշկը ստիպողական պարագաներու տակ այցելած է շատ մը չքաւորներու տուները. կարգ մը հիւանդութեանց համար ենթակաները ղրկուած են մասնագէտներու, որոնց պատուագինը վճարուած է Միութեանս կողմէ: Շուրջ 40 հիւանդներ դարմանուած են հիւանդանոցներու մէջ, դարձեալ Միութեանս ծախքով: Բոլոր չքաւոր հիւանդներուն ղեղերը ձրիաբար հայթայթուած են Միութեանս դարմանատունէն:

Կատարուած են նաեւ 2000է աւելի զանազան ներարկումներ, ինչպէս նաեւ վերքերու փոփոխութիւն, աչքի դարմանում և ականջի լուացում:

Միութեանս Յովակիմեան - Մա-

նուկեան, Դարուհի Յակոբեան վարժարաններէն և Անթիլիասի Դպրեվանքէն զատ, 25 հայկական ուրիշ դպրոցներու բժշկական քննութիւնը կատարուած է դարմանատան բժիշկին կողմէ: Պէյրութի շրջանակին ղրկուած 6000 քիւօ փոշի կաթէն հիւանդներու, ձերերու և ծծկեր մանուկներու բաժինը բաշխուած է դարմանատան միջոցաւ, ինչպէս նաև ձկան իւղ տրուած է տկարակազմ տղոց:

Զահլէի դարմանատուն

Պէյրութի մեր դարմանատան բժիշկը, շաբաթը երկու կէս օրէ վերջերը այցելած է Զահլէ և շուրջ 600 հիւանդներ դարմանած, որոնց մեծ մասին ղեղերը տրուած են ձրիաբար:

Վերոյիշեալ դարմանատունը Միութեանս տեղական մասնաձիւղին խնամքին տակ կը գտնուի:

Հալեպի եւ Շրջաններու

սպասարկութիւնը

Միութեանս Սուրիոյ շրջանակին առողջապահական սպասարկութիւնը վարած է տեղւոյն Շրջ. Յանձնաժողովի կողքին գործող Առողջապահական Յանձնախումբը: Գործողութեան կարօտ ծանր

ԻՏԱՂԻԱ

Ողբացեալ Օննիկ Տիւրիզեանի մահէն վերջ Միլանի Մասնաճիւղը գրեթէ կազմալուծ վիճակ մը ունէր: Այս տարի, Յունուարին, Բարեգործականի հին և նոր անդամները՝ թիւով 35 հոգի, հաւաքուելով ընտրեցին նոր վարչութիւն մը, հետեւեալ ազգայիններէ. — ՊՊ. Ե. Հիւսիսեան, Օ. Մանուկեան, Ճ. Յովհաննէսեան, Ս. Սրապեան և Յ. Ալեքսանեան: 1955էն սկսեալ տարեկան նուազագոյն անդամավճարը բարձրացաւ 3000 իտալական լիրէթի և շատեր ալ բացառիկ զուժարներ վճարեցին իբրև տուրք: Մեծ խանդավառութիւն կը տիրէ:

հիւանդները դարմանուեցան Ալբունեան և Սեն Լուի հիւանդանոցներուն և ձեռագրեցան Ակնարուժարանին մէջ:

Գաւառական քաղաքներու և գիւղերու աղքատ հիւանդները ոչ միայն Միութեանս միջոցներով խնամուեցան վերոյիշեալ հիւանդանոցներուն մէջ, այլ նաեւ անոնց տրուեցաւ ձրիաբար փէնիսիլին, սթրէփթոմիսին, սիւլֆա, քիւնին և այլ դեղեր:

Այս շրջանակին յատկացուեցաւ 8000 քիլօ փոշի կաթ, որ բաշխուեցաւ հիւանդներու, ծեքերու և ծծկեր մանուկներու: Տկարակազմ տղոց յատկացուած է նաեւ ձկան իւղ:

40 մանուկներ և պատանիներ երկու խումբով օգափոխութեան տարուած են Քարաուրան գիւղը:

Լիբանանի և Սուրիոյ շրջաններուն առողջապահական ձեռնարկներուն յատկացուած գումարն է 14000 Տոլար:

Հալէպի կարմիր Սաչի շէնքը 1954 տարեշրջանի վերջաւորութեան փոխանցուեցաւ Միութեանս անուան. այս մասին կը խօսինք յառաջիային:

ՅՈՒՆԱՍՏԱՆ.— Յունահայ գաղութին մէջ մեր առողջապահական սպասարկութիւնը կ'ընդգրկէ հետեւեալ ձեռնարկները.—

- 1) Դեղերու բաժանում
- 2) Դպրոցականներու առողջութիւն
- 3) Տկարակազմ տղոց օգափոխութեան
- 4) Փոշի կաթի բաշխում [թիւն
- 5) Բացառիկ նպաստի յատկացում Աթէնքի և Սելանիկի շրջաններու կարօտ քոմախսաւորներուն և այլ չքաւոր հիւանդներուն շրջուեցաւ 2000 կրամ սթրէփթոմիսին և 5000 կրամ փաս:

Գարակէօզեան Հաստատութեան հետ գործակցաբար, հովանաւորեալ վարժարաններու աշակերտութեան եղանակով, կոկորդի, ականջի, ակուաններու և քիթի դարմանումներ և չքաւորներու դեղերը հայթայթուեցան ձրիաբար:

1954ի ամբան, Աթէնքի և Սելանիկի տկարակազմ աշակերտները օգափոխութեան տարուեցան:

Աթէնքի Մանկութեանայ կոչուած ծառայիտ և օգասուն հողամասին վրայ գնուեցաւ քեմիքիկի վայր մը 65 Միլիոն ՏՐԱԽՄԻ, որուն 33 միլիոնը Միութիւնս տրամադրեց, 18 միլիոնը՝ Հ. Գարակէօզեան Հիմնարկութիւնը և 14 միլիոնն ալ Հայ Կապոյտ Սաչը:

Կեդրոնէն շրջուած 200 քիլօ փոշի կաթը յատկացուեցաւ քէմիքիկին, որուն վրաններն ու կարասիները ևս հայթայթուեցան մեր Մասնաժողովին կողմէ: Օգափոխութեան տարուեցան 166 աշակերտներ, 105ը՝ աղջիկ և 61ը՝ մանչ, բաժնուած երեք խումբերու, որոնց իւրաքանչիւրը 20 օրուան օգափոխութիւն մը ըրաւ սոյն կազմակերպիչ և օգասուն վայրին մէջ:

Սելանիկի մէջ տիրող մանկական անդամալուծութեան համաճարակին պատճառաւ, ներկայ շրջանին, այդ քաղաքին տկարակազմ տղաքը կարելի չեղաւ օգափոխութեան տանիլ, բայց քէմիքիկի յատկացուած 10 միլիոն տրախմին յատկացուեցաւ չքաւոր մանուկներու բացառիկ սնունդին և այլ հոգածութեանց:

Ներկայ շրջանին, Կեդրոնէն Յունահայ գաղութին շրջուեցաւ 3000 քիլօ փոշի կաթ, 199 սնտուկներով, որուն 133 սնտուկը՝ Աթէնքի հովանաւորեալ վարժարաններու 627 աշակերտներուն, 15 սնտուկը ամառնային քէմիքիկին, 45 սնտուկը Աթէնքի և շրջաններու չքաւորներուն և 6 սնտուկն ալ Սելանիկի կարօտեալներուն, բացի Կեդրոնէն շրջուած ուտեստեղէնի ծրարներուն, այրիներու և այլ չքաւորներու, որոնց գումարը Աթէնքի շրջանին մէջ 26 միլիոն և Սելանիկի շրջանին մէջ ալ 19 միլիոն տրախմի կը յանգի:

100,000 ՏՈՒԱՐ

Միութեանս Կեդրոնական վարչական Ժողովի Պատուակալ Նախագահն եւ ծանօթ բարերար Տիար Զարեն Պէյ Նուպար հարիւր հազար տողար նուիրած է Միութեանս, որուն եկամուտը ամէն տարի մրցանակներ պիտի տուին ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ եւ այլ մարզերու մէջ աչքառու յաջողութիւններ արձանագրող Հայերու:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆՁԵՌՆՄԻՍԵԼԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԸ

1954-ի վերջաւորութեան, Միութեանս անձեռնմխելի դրամագլուխը հասած է

8.000.000 ՏՈՒԱՐԻ

Միայն Ամերիկայի մէջ

1391

ՆՈՐ անդամներ արձանագրուած են Միութեանս՝

1954ի ընթացքին